Հառականայ բաղմութեանը պատճառաւ գաղղիարէնն ու իտալերէնն ալ շատ ծաղկած է հոն. և աս լեզուներուն ծաղկելովը կարծես թէ ժողովրդեան աչքն ալ աւելի կերպով մը բացուած ու աշխուժութիւններին և աչալրջութիւններին աւելցած է։

Օ միւռնիոյ ձմեռը թեթև է. անանկ որ ցուրտ երկրի վարժողը կրակարանի ալ կարօտ չըլլար. բայց անձրևներուն շատութեանը համար օդը թաց է ու անառողջ։ Մարը յուլիսէն ինչուան սեպտեմբեր սաստիկ տաք կ'ըլլայ, երբեմն ալ ան աստիճանի չորութիւն կ'ըլլայ որ ինչուան գետինը կը պատրուտի։ Անանկ ատեն բոլոր քաղաքացիք գեղերը կը ցրուին։ Մը ժեղն ալ խիստ շատ կ'ըլլայ ամառը։

Խարեբերութեան կողմանէ շատ անուանի է Օ միւռնիա. վասն զի ով չիգիտեր պատուական թուղն ու չամիչը. անոնցմէ զատ ունի նաև աղէկ ձէթ ու շուշմայ, և քաղաքէն դուրս եղած արտերուն մէջ լեցուն ձիթենի է։ Թէպէտ ամէն տեսակ պտուղ կայ հոն, բայց նարինջը խիստ առատ է, ու ամէն պարտէզներու մէջ ձմեռը մեծ զարդ կ'ընէ։ Կենդանեաց կողմանէ նապաստակն ու պեքայ ըսուած թռչունը խիստ շատ են։

Աշգասիրութիւնը նաև մէն է. ասոր ղեկը խոհեմութիւնը պիտի ըլլայ. իշխանաց առատաձեռնութիւնը՝ առագաստները լեցնող յաջող հովեր. ուսմունքն ու կրթութիւնը իրեն բևեռային աստղն ու կողմնացոյցը. յարատևութիւնն ու յոյսը՝ իրեն խարիսխը. ամենէն աւելի՝ իմաստուն առաջնորդութիւն մէկ նաւապետի, ու միաբանութիւն և հնազանդութիւն գործունեայ նաւավարներու. այսպէս որ ըլլայ, փոթորիկներէն վախ մի ունենար։

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵՐՔ ՀԱՅԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Դպրոցական պղոյ համար։

Այս վերնագիրը տեսնելով թերևս ըսեն ոմանք զարմացմամբ, կամ նաև նեղսրտութեամբ մը. Ինչ, դարձեալ քերականութիւն. ինչ հասկը-նամ քերականութիւնները շատցընելէն. աս քանի՞ մէկ նոր նոր քերականութիւններ պիտի ելլեն. ինչուան երբ մեր տղաքը գրաբառ լեզուն սորվելու գլուխ յոգնեցընեն ու ատեն կորսընցընեն. մենք կ'ուզենք որ նոր նոր գրքեր տեսնենք, նոր նոր գիտութեանց ու արուեստից վրայ գրքեր ելլեն որ ազգերնիս մարդ ըլլայ, լուսաւորուի, պայծառանայ. ահա ինչուան հիմա տասուերկու տեսակէն աւելի քերականութիւն կայ տպուած, ասոնք բաւական չե՞ն գրաբառ լեզուն պէտք եղածին չափ սորվելու. ուրիշնոր քերականութիւն ինչ հարկաւոր էր։ Այսպիսի խօսքերը ո՛րչափ ալ ուսումնասէր ու ազգասէր սրտէ բխած ելևնան, ճշմարիտ ուսումնասիրաց ու ազգասիրաց առջևը պէտք է որ բոլորովին անոնց հակառակ պակասութիւններէ առաջ եկած սեպուին։ Այսան զի ճշմարիտ ուսումնասէրը լաւ պիտի գիտնայ թէ ուսմունքները միայն ան ատեն դիւրաւ ու քիչ ժամանակի մէջ առաջ կ'երթան, երբոր զանոնք սորվելու միջոցները գործիքները կատարելագործուին ու դիւրանան. ճշմարիտ ազգասէրն ալ խիստ լաւ հասկրցած պիտի ըլլայ թէ ո՛րչափ որ ազգային լեզուն աղէկ սորվեցընող գրքերը շատնան, այնչափ հիմնական, հաստատուն ու ներքին կ'ըլլայ ազգին պայծառութիւնը. անով միայն մեր ազգն ալ կը համարուի ո՛չ եթէ Այսովպոսին ագռաւին պէս՝ սիրամարգին փետուրներովը զարդա-